

Հարցազրույց «ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) գիտահետազոտական բաժինների վարիչների հետ հարցազրույցներ» շարքից:

2022թ. հունիսի 15

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) «Պատմամշակութային աստղագիտության» գիտահետազոտական բաժնի վարիչ, Բ.Գ.Թ. Հայկ Մալխասյանի հետ



Հայկ Մալխասյան

Հարգելի՛ պրն Մալխասյան,

1. Խնդրում եմ նկարագրել Ձեր ղեկավարած գիտահետազոտական բաժինը՝ քանի՞ գիտաշխատողից է այն կազմված (մի փոքր ներկայացրեք նրանց), և որո՞նք են ուսումնասիրության հիմնական ուղղությունը, թեմաները, առաջադրված խնդիրները:

«Պատմամշակութային աստղագիտության» բաժնի աշխատակիցները 3-ն են՝ ես՝ գիտաշխատող և բաժնի վարիչի ԺՊ, Արմեն Դավթյանը՝ գիտաշխատող և Սոնա Ֆարմանյանը՝ կրտսեր գիտաշխատող:

Ինքս զբաղվում եմ Հայաստանի տարածքում գտնվող վիմակերտ (մեգալիթյան) հուշարձանների աստղագիտական (որտեղ շատ կարևոր է նաև հնագիտական ազգագրական առկա տվյալների համեմատական վերլուծությունը)՝ մասնավորապես վաղ բրոնզի դարի հայկական օրացույցի ուսումնասիրությամբ, որին սկիզբ է դրել Գրիգոր Բրուսյանը: Նրա այս աշխատանքի ամբողջական արդյունքների մասին մենագրության խմբագրական աշխատանքներն այժմ ավարտին են մոտենում, և

շուտով այն պատրաստ կլինի տպագրության: Վիմակերտ հուշարձաններից (բացի Ջորաջ Քարերից) մեր ուշադրության կենտրոնում է հայտվել նաև Շիրակի մարզի Հարթաշեն գյուղի մոտ գտնվող մի հուշարձան, որի նախնական դիտարկումները դեռևս 2020թ-ին որոշ աստղագիտական առումով կարևոր հատկանիշներ են ի հայտ բերել: Այս առումով խնդիր է դրվել և արդեն իրականացվում է հուշարձանի ամբողջական ճշգրիտ չափագրություն, ինչը հնարավորություն կտա հիմնավոր կերպով հետազոտել այն աստղագիտական տեսանկյունից:



Արմեն Գաղղայան

Հնագույն ժամանակների աստղագիտության մասին գրավոր արձանագրությունները մեզ են հասել միջագետքյան՝ շումերաբաբելական մշակույթի տեսքով: Ուսումնասիրությունների առաջին արդյունքները խիստ որոշակի զուգահեռներ և նույնություններ են ի հայտ բերում հայկական աստղագիտական ժառանգության հետ: Այս ուղղությամբ են ընթանում հիմնականում բաժնի գիտաշխատող Արմեն Դավթյանի ուսումնասիրությունները:

Նշեմ, որ բոլորովին վերջերս լույս է տեսել նրա «Շումերների երկրագործական ուղեցույցը հայերեն է» վերտառությամբ մենագրությունը:



Սոնա Ֆարմանյան

Սոնա Ֆարմանյանը կրտսեր գիտաշխատող և միաժամանակ ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի հայցորդ է Վարդան Դևրիկյանի ղեկավարությամբ: Թեման նվիրված է հայ միջնադարյան գրականության մեջ աստղագիտական գիտելիքների բացահայտմանը և մեկնաբանմանը: Սոնան Հայաստանում մշակութային աստղագիտության ոլորտում կարևոր աշխատանքների հեղինակներից է: Մասնավորապես արժեքավոր են աստղագիտական տերմինաբանության նրա հետազոտությունները՝ Երկրի, Արեգակի և Լուսնի

անվանումների համեմատությունները բազմաթիվ լեզուներով: Սոնան ակտիվ է նաև աստղագիտական կրթության և աստղագիտության հանրայնացման հարցերում:

Բաժնի հետազոտությունների հիմնական ուղղություններն են.

- **Ջորաջ Քարեր** հուշարձանի աստղագիտական ուսումնասիրություն
- **Հարթաշենի** վիմակերտ հուշարձանի ուսումնասիրություն աստղագիտական տեսանկյունից
 - Ն.Ք. 4-րդ հազարամյակի **Քեթիի քրեղանի Բ երեսի** զարդապատկերի ուսումնասիրություն օրացույցային տեսանկյունից
 - **Հնագույն հայկական օրացույցների** ի հայտ բերմանն ու վերականգնմանն ուղղված ուսումնասիրություններ
 - Աստղագիտական օրացույցային տեղեկությունների ի հայտ բերում և վերլուծություն **Հայ բանահյուսական և ազգագրական նյութում (Էթնոաստրոնոմիա)**
 - **Հայ-շումերական աստղագիտական «տերմինների»** լեզվական ընդհանրությունների վերհանում: Հայկական հնագույն աստղանունների ճշգրտում, նույնացում և համեմատություն **շումերական սեպագիր վկայությունների** հետ:
 - **Մշակութային աստղագիտություն:**

2. Ի՞նչ ծրագրերի շուրջ եք այժմ աշխատում: Ինչպիսի՞ միջազգային կամ տեղական համագործակցություններ ունեք:

Տեղական համագործակցություններն ընթանում են երկու ուղղությամբ՝

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ համատեղ կատարվում են խորո առարկա հուշարձանների չափագրություն ժամանակակից չափիչ սարքերի և համապատասխան որակավորում ունեցող մասնագետների ներգրավմամբ:

Այս համագործակցության արդյունքում 2020թ-ին 1-շաբաթյա գիտարշավ անցկացվեց Ջորաջ Քարեր հուշարձանում: Ամբողջությամբ և լիարժեք չափագրվեց և եռաչափ թվային տվյալների տեսքի բերվեց ամբողջ հուշարձանը: Ստացված



Գիտարշավ Չորաց Քարեր հուշարձանում. 2020թ.

տվյալներն արդեն կիրառելի են հուշարձանի աստղագիտական ուսումնասիրություններում: Նույն մոտեցումը 2021թ-ից կիրառում ենք Հարթաշենի հնավայրի չափագրական աշխատանքներում:

2. Համագործակցում ենք Վ. Բրյուսովի անվան համալսարանի հետ՝ ուսանողներին ներգրավելով

հայկական բանահյուսական նյութի հետ ծավալուն հետազոտական աշխատանքներին: Այս ուսումնասիրությունների առաջին պտուղները արդեն հասունանում են:

3. Վերջին տարիների գիտական ի՞նչ հայտնագործություններ կառանձնացնեք:

Կարևոր արդյունքները վերաբերում են հիմնականում հնագույն հայկական օրացույցերին՝ մասնավորապես Նախահայկյան կոչվող օրացույցին, որն իր սկզբնավորման ն.Ք. 9000թ-ին հիմնավորումը գտավ նաև Չորաց քարեր հուշարձանում սկսված ուսումնասիրությունների առաջին իսկ արդյունքներում (**H. Malkhasyan, ComBAO, 2021, 68(2), 407-416**): Մյուս կողմից հուշարձանի կառուցման ժամանակի հաշվարկի առայժմ ամենահիմնավորված արդյունքը ստացվել է 2020թ-ին, որը դեռ մեր ուշադրության կետրոնում է (**H. Malkhasyan, ComBAO, 2020, 67(1), 27-36**): Վերջին չափագրության տվյալների հիման վրա կատարված ուսումնասիրությունները Չորաց Քարեր հուշարձանում հայտնաբերեցին մի քանի դիտահարթակներ, հատուկ դիտողական նպատակով տաշված անկյունավոր վեմեր (**H. Malkhasyan, ComBAO, 2021, 68(2), 407-416**), ինչպես նաև մի քանի քարերից կազմված համալիր «դիտողական գործիքներ»:

4. Տպագրված կամ դեռ ընթացքի մեջ գտնվող ի՞նչ նշանակալից գիտական հոդվածներ կնշեք:

Վերջին 40 տարվա տոմարագիտական հետազոտությունները համապարփակ հոդվածով տպագրվել են Բյուրականի աստղադիտարանի 75-ամյակին նվիրված գիրք-հաշվետվության մեջ: Այս հետազոտությունները հիմնականում վերաբերում են Գրիգոր Բրուսյանի գործունեությանը: Զորաց Քարեր հուշարձանի հետազոտությունների առաջին արդյունքների մասին հոդվածները գտնվում են տպագրության մեջ.

- Գր. Բրուսեան, Հ. Մալխասեան, «Բազմավէպ», Վենետիկ, 2021, 3-4;
- Հ. Մալխասեան, «Բազմավէպ», Վենետիկ, 2021, 3-4;
- H. Malkhasyan, ComBAO, 69(1), 2022:

5. ԳՀ բաժնի գործունեության այլ կարևոր ցուցանիշներ՝ գիտաժողովների մասնակցություն, զեկուցումներ, սեմինարներ, դրամաշնորհային նախագծեր, մրցանակներ:

Բաժնի աշխատանքների արդյունքները պարբերաբար ներկայացվում են աստղադիտարանի սեմինար-քննարկումներում, նաև ծավալուն զեկույց է ներկայացվել ԲԱ-ի 75-ամյակին նվիրված միջազգային առցանց գիտաժողովում և 14-րդ համաբարձումյանական ընթերցումներում (սեպտ., 2021):

Ա. Դավթյանը վերջերս զեկույցով մասնակցել է «Арменоведение в контексте языков и культур» միջազգային գիտաժողովին (Մոսկուա, 2022, մարտի 1-2):

6. Ձեր կարծիքով ինչու՞ մ է կայանում աստղագիտության կարևորությունը մարդկության և Հայաստանի զարգացման գործում:

Անհիշելի ժամանակներից է մարդկության հետաքրքրությունը աստղալից երկնքի նկատմամբ, որը չի մարում նաև այսօր: Դասական աստղագիտության ձեռքբերումներն իրենց ժամանակին զարկ են տվել հաշվարկային գիտություններին: 20-րդ դարի աստղաֆիզիկայի առջև ծառայած խնդիրների լուծման համար գիտության լուրջ առաջընթաց էր հարկավոր, որի կայացումը մեծավ մասամբ Վ. Համբարձումյանի երախտիքն է: Մենք մշտապես եղել ենք առաջատարը աստղագիտության մեջ, և այս

ավանդույթն ու ժառանգությունը պահպանելը հույժ կարևոր պիտի լինի յուրաքանչյուր հայի համար:

7. Ի՞նչ է Ձեզ համար Բյուրականի աստղադիտարանը:

Հայաստան աշխարհը, նրա ամեն մի անկյունը, հողը, ջուրը, օդը, շենը ինձ համար անփոխարինելի են: Դեռևս հնագույն ժամանակներում մեր երկիրը հարևանները համարում էին «Աստվածային օրենքների երկիր»: Այն համարվում էր անառիկ «Եդեմական այգի», որտեղ



Բյուրականի աստղադիտարանի վարչական շենք

ոտք դնելն աստվածների բարի կամքին արժանանալու պես մի բան էր: Այսօր, ցավոք, մենք մոռացել ենք դրա մասին, ավելի ցավալի է այն, որ նույնիսկ չենք ուզում գիտակցել դա: Իսկ սարսափելին այն է, որ երբեմն նույնիսկ հեզնական բարբաջանքներ են հնչում «բարձր» աստյաններից: Ինչևէ, ինձ համար Հայոց աշխարհը, իր հազարամյակների մշակույթով, գիտությամբ և պատկառելի պատմությամբ կա ու կմնա որպես ՄԱՐԴ ապրելու և ստեղծագործելու միակ օրրանը: Իսկ Բյուրականի աստղադիտարանը՝ բոլոր ժամանակների այն «Դրախտային այգին», որտեղ ոտք դնելու համար աստվածային նախախնամություն է պետք:

Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը